XXI

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (XVII—XVIII ԴԴ.?)

Ժամանակագրության սույն ընագիրը գտնվում է Մատենադարանի № 3079 ձեռագրի 251բ—252բ էջերում։ Այն հրատարակվում է առաջին անգամ։ Ժամանակագրությունը բաժանվում է երկու մասի, յուրաքանչյուրն առանձին վերնագրով՝

ա. «Ցաղագս Թագաւորացն Հայոց՝ սկսեալ ի սրբոյն Տրդատայ մինչև ի բառնալ Թագաւորութեանցն Արշակունեաց»։

բ. «Ցաղագս Թագաւորացն Հոռմայ և Ցունաց՝ ի Մեծէն Կոստանդիանոսէ մինչև ի Փոքր Թէոդոս»։

Ժամանակագրության առաջին մասը, ինչպես նշված է խորագրում, սկսվում է Տրդատ Գ-ի գահակալության թվականից՝ 286 թ. և հասնում մինչև Արշակունիների դինաստիայի անկումը, իսկ երկրորդ մասը՝ Կոստանդին I-ից մինչև Թեոդոս II-ի մահը և սրա հաջորդ Մարկիանոսի գահ բարձրանալը՝ 449 թ.։

Թե ով և երբ է կազմել այս ժամանակագրությունը, հաստատ և պարզորոշ բան չենք կարող ասել։ Այս ընագիրը կազմելու ժամանակի մասին կարելի է առանձին ենթադրություն անել, եթե նկատի ունենանք № 3079 ձեռագրի նյութերի ընդօրինակության պարագաները։

Այս ձեռագիրը պատմական նյութերի ժողովածու է, որը բովանդակում է տարբեր ժամանակներում, տարբեր մարդկանց կողմից ընդօրինակված նյութեր, օրինակ, մի քանի ընագրեր ընդօրինակվել են 1677 թ. (էջ 234բ), մյուսը՝ 1700 թ. (էջ 378ա), մի ուրիշը՝ 1727 թ. (էջ 239բ), իսկ մի քանիսի ընդօրինակության ժամանակն էլ անհայտ է։

Նկատի ունենալով տարբեր ժամանակներում, տարբեր գրիչների կողմից, զանազան նյութերի ընդօրինակության այս կարգը, կարծում ենք որ մեզ զբաղեցնող ժամանակագրությունն էլ № 3079 ձեռագրում ընդօրինակվել է XVII դարի վերջում կամ XVIII դարի սկզբներին, իսկ կազմելու ժամանակը, վերապահությամբ, նշում ենք նույն ժամանակաշրջանից ոչ ուշ, թեև հնարավոր է, որ այն ավելի հնում կազմված լիներ։

Ժամանակագրության հեղինակի, ինչպես նաև աղբյուրների մասին որոշակի բան ասելը ևս դժվար է։ Առաջին, հայ Արշակունիներին վերաբերող մասում, թեև թագավորների գահակալության տարեթվերը տարբերվում են մինչև հիմա մեզ հայտնի տվյալներից, սակայն թագավորների իշխանության տարիների քանակը, բացառությամբ մի երկուսի (Արշակ Բ և այլն), համընկնում է Մ. Խորենացու վկայություններին։ Ժամանակա-

դրության այս մասի սկզբի մի քանի ավյալները (Տրդատ Գ-ի մահը, Խոսրով Կոտակի, Տիրանի) համապատասխանում են Զամչյանի ձեռքի տակ եղած տեղեկություններին[1], բայց այնուհետև խիստ կերպով տարբերվում են իրարից։ Այս մասում որպես նորություն և ուշագրավ տեղեկություններ պետք է համարել հետևյալ վկայությունները՝ ա) Տրդատ Գ-ից հետո մինչև Խոսրով Կոտակի գահակալելը հեղինակը նշում է երկու տարի անիշխանություն. բ) Արշակ Բ-ն ըստ նոր վկայության իշխել է ոչ թե 30 տարի, ինչպես հաղորդում են Փ. Բուզանդը, Մ. Խորենացին և ուրիշները, այլ 17 տարի, մի շատ հավանական թիվ, որն առաջարկում են ուսումնասիրողները։ Այս շեղումները, ըստ երևույթին, հնագույն և հավաստի աղբյուրներից քաղված տեղեկություններ են, որոնք արժանի են հատուկ ուշադրության։

Ժամանակագրության երկրորդ մասի տեղեկությունները զարմանալի կերպով համապատասխանում են գիտության կողմից ընդունված տվյալներին։ Այդ վերաբերում է ոչ միայն կայսրների կառավարման տևողությանը և տարեթվերին, այլև պատմական առանձին դեպքերին։ Այդ բանը ցույց տալու համար ծանոթագրություններում նշել ենք հռոմեական կայսրների ցանկը, այն վերցնելով Մաշկինի «Հին Հռոմի պատմություն» աշխատությունից[2]։

---

[1] «Պատմութիւն Հայոց», հա. Ա, էջ 425, 427, 431։

[2] Երևան. 1951 թ., տես «Հռոմեական կայսրների թվարկ.» գլուխը, էջ 925—927։

XXI

ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ՀԱՅՈՑ՝ ՍԿՍԵԱԼ Ի ՍՐԲՈՅՆ ՏՐԴԱՏԱՅ ՄԻՆՉԵՒ Ի ԲԱՌՆԱԼ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ

251բ

Յամի տեառն ՌՃՁՁ (286) թագաւորէ Հայոց Տրդատ, յերրորդ ամին Դիոկղիտիանոսի կայսեր, և գայ ի Հայս հալածելով զՊարսիկս ընդ նմին և զինուորեալ սուրբն Գրիգոր։

Ի նոյն թվոջ ԳՃԳ (303) սուրբն Գրիգոր լուսաւորեաց զՀայաստան աշխարհս և մկրտեցաւ Տրդատ արքայ ԺԵ (15)-րդ[1] ամի թագաւորութեան իւրոյ, որ է վերջին սմն հալածանաց ամբարշտին Դիոկղտիանոսի և պղծոյն Մաքսիմիանոսի։

Ի նոյն թվոջ ԳՃԺԴ (314) յերկրորդ ամի հաւատով լուսաւորելոյն Մեծին Կոստանդիանոսի, սրբոյն Տրդատ ԻԸ (28) ամի թագաւորութեան իւրոյ, որ են ամք ԺԲ (12) իւրոյ հաւատացեալ գոլոյն, հանդերձ սրբոյն Գրիգորիւ երթայ ի Հոռմ։

Ի նոյն թվոջ ԳՃԽԲ (342) վախճանեալ սրբոյն Տրդատայ ՁՁ (86) ամաց, յետ ԾՁ (56) ամի թագաւորութեան իւրոյ. և Ցնաց աշխարհս Հայոց առան[ց] թագաւորի ամս Բ (2)։

Ի նոյն թվոջ ԳՃԽԳ (344), յութերորդ ամի Կոստանդինոսի հերձուածողի, որդւոյ Մեծին Կոստանդիանոսի, թագաւորէ[2] Հայոց Խոսրովն[3], որդի Տրդատայ, ամս Թ (9)։

Ի նոյն թվոջ ԳՃԾԳ (353), ԺԷ (17) ամի Նորին Կոստանդինոսի թագաւորէ Տիրան, որդի Խոսրովու, ամս ԺԱ (11)։

Ի նոյն թվոջ ԳՃԿԳ (364), յետ սատակման պղծոյն Յուլիանոսի, Շապուհ արքայն Պարսից ըմբռնեալ զՏիրան և թագաւորեցոյց զորդի նորին Արշակ ամս ԺԷ (17)[4]։

Ի նոյն թվոջ ԳՃՁԱ (381), յերրորդ ամի Թէոդոսի Մեծին, Արշակ ակամայ երթայ ի Պարս և անձնամահ լինի. և Մեծն Թէոդոս թագաւորեցուցանէ Պապ՝ որդի նորա։

Ի նոյն թվոջ ԳՃՁԸ (388), յետ եօթն ամի թագաւորութեանն Պապայ, սպանաւ ի Մեծէն Թէոդոսէ, սակս սրբոյն Ներսեսի և փոխանակ նորին կացուցանէ Վարազդատ, սմն Յարչակունի ազգէ, որ թագաւորեաց ամս Դ (4)։

Ի նոյն թվոջ ԳՃՂԲ (392) Վարազդատ սակս ձեռնտութեան Պարսից ըմբռնեցաւ ի Յունաց. և թագաւորեցոյց Հայոց Մեծն Թէոդոս զերկու որդիսն Պապայ՝ զԱրշակ ամս Է (7) և Վաղարշակ, որ ի նոյն ամին վախճանեցաւ։

Ի նոյն թվոջ ԴՃՂԷ (397) Աբշակ արքայ վաղճանի և միապետէ թագաւորութիւն Հայոց Խոսրովի, յազգէ Ցարշակունեաց, զոր Բ (2) ամաւ յառաջ ի Պարսից մասին Հայոց կացուցեալ էր թագաւոր։

5 Ի նոյն թվոջ ԴՃԲ (402) Խոսրով արքայն կալանս եղև ի Պարսից յետ Ե (5) ամի և թագաւորեաց Վռամշապուհ, եղբայր նորին, ամս ԻԱ (21)։

Ի նոյն թվոջ ԴՃԻԴ (423) յետ մահուան Վռամշաբուհոյ թագաւորեաց Հայոց նոյն Խոսրով ամս Ա (1)։

10 Ի նոյն թվոջ ԴՃԻԴ (424) թագաւորէ յետ || Խոսրովու 252ա
Շաբուհ, որդի Ցազգերտի, Պարսից արքայի, ամս Դ (4)։

Ի նոյն թվոջ ԴՃԻԸ (428) Շաբուհ երթայ առ հայր իւր սրտմտեալ ի Հայոց, և անդէն սատակի. և մնայ աշխարհս Հայոց առանց թագաւորի ամս Գ (3)։

15 Ի նոյն թվոջ ԴՃԼԱ (431) թագաւորէ Հայոց Արտաշէս, որ կոչեցաւ Արաշիր, ամս Զ (6)։

Ի նոյն թվոջ ԴՃԼԶ (436) բառնայ թագաւորութիւնն Հայոց ի տանէն Արշակունեաց ԻԹ (29) ամի Թէոդոսի Փուքու և մարզպանք Պարսիկք տիրեցին Հայոց։

ՍԿԶԲԵՌ ԹԷՈԴՈՐՈՍՆ ՀՌՈՄԱՑ ԵՒ ՍՈՒՆԱՑ՝ Ի ՄԵԾԷՆ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍԷ ՄԻՆՉԵՒ Ի ՓՈՔՐ ԹԷՈԴՈՍ

20 Ցամի տեառն ԴՃԶ (306) թագաւորեաց Մեծն Կոստանդիանոս. զկնի Կոստասայ հօրն իւրոյ, Ի (20)-րդ ամի Տրդատայ Հայոց թագաւորի։

Ի նոյն թվոջ և ի նոյն ամի թագաւորեաց յարևմուտս հակառակ նմին Սևերոս ամս Ա (1)[6], զոր սպան Մաքսեանէս և ինքն

25 թագաւորեաց ամս Ե (5)[7]։ Եւ ի սոյն թվին թագաւորեաց յարևելս Մաքսիմինէս ամս Ը (8)[8]։

Ի նոյն թվոջ ԴՃԺԲ (312) Մեծն Կոստանդիանոս նշանաւ սրբոյ խաչին յաղթեաց Մաք[սենտիոս] և եմուտ ի Հռոմ[9]։

Ի նոյն թվոջ ԴՃԺԳ (313) հաւատաց ի տէր ինքն և Լիկիանոս ծեր[10], քեռ այր իւր։

30 Ի նոյն թվոջ ԴՃԺԴ (314) ել պատերազմ ընդդէմ Մաքսիմինոսի, սպան նա և թագաւորեաց Լիկիանոս ընդ նորա ամս Թ (9)[11]։

Ի նոյն թվոջ ԴՃԻԴ (324) ըմբռնեաց զԼիկիանոս ուրացեալն

35 ի հաւատոց և ապստամբեալն յինքենէ[12] և ինքն Կոստանդիանոս միահեծան թագաւորեաց։

Ի նոյն թվոջ ԴՃԼԷ (337) վաղճանեալ սրբոյն Կոստանդիանոսի ԿԵ (65) ամաց, յետ Լ (30) ամի թագաւորութեան իւրոյ, և թագաւորեցուցին որդիք նորա՝ Կոստաս[13] ուղղափառ ի Հռոմ,

40 Կոստանդիանոս[14] և Կոստանդինոս[15] հերձուածող յարևելս ամս ԻԵ (25)։

Ի նոյն թվոջ ԴՃԽ (340) Կոստանդիանոս սպանաւ ի զօրացն՝ ի սադրելոյ եղբօր իւրոյ Կոստանդինոսէ։

Ի նոյն թվոջ ԳՃԾ (350) Կոստաս սպանաւ ի Հոմ ի Մագ-
նիտոսէ[16] յետ ԺԳ (13) ամի, և Կոստանդինոս միահեծան տիրեաց։
Ի նոյն թվոջ ԳՃԿԲ (362) թագաւորեաց ուրացողն Քրիս-
տոսի պիղծն Ցուլիանոս[17], յետ մահուանն Կոստանդինոսի ամս
5 Բ (2) ամիսս Գ (3)։
Ի նոյն թվոջ ԳՃԿԳ (363) սատակիլ պղծոյն Ցուլիանոսի
թագաւորեաց Յորիանոս ամիսս Ը (8)[18]։
Ի նոյն թվոջ ԳՃԿԴ (364) յետ Յորիանոսի թագաւորեցու-
ցին Վաղենտինոս[19] ուղղափառ ի Հոմ ամս ԺԲ (12) և եղբայր
10 նորին Վաղէս[20] հարձուածող ի Կոստանդնուպոլիս ամս ԺԵ (15)։
Ի նոյն թվոջ ԳՃՀԵ (375) վաղճանի Վաղենտիանոս ի Հոմ
և թագաւորին, որդիք նորին՝ Գրատիանոս[21] և Վաղենտիանոս
Փոքր[22]։
Ի նոյն թվոջ ԳՃՀԸ (378) այրեցաւ հ[ե]րձուածողն Վաղէս,
15 ըստ արժանւոյն իւրոյ յԱդրինապոլիս։
Ի նոյն թվոջ ԳՃՀԹ (379) թագաւորեաց աստուածատուրն
Թէոդոս Սպանիացին[23], փեսայ գոլով || Վաղենտիանոսի Մեծին, փո- 252բ
խանակ Վաղէսի ի Կոստանդինուպոլիս։
Ի նոյն թվոջ ԳՃՁԳ (383) Գրատիանոս սպանաւ ի Հոմ,
20 յետ ութ ամի թագաւորութեան իւրոյ։
Ի նոյն թվոջ ԳՃՂԲ (392) Վաղենտիանոս Փոքր սպանաւ ի
Հոմ, յետ ԺԵ (15) ամի թագաւորութեան իւրոյ և միահեծան
տիրեաց Մեծն Թէոդոս։
Ի նոյն թվոջ ԳՃՂԵ (395) վաղճանեալ սրբոյն Թէոդոսի
25 Մեծին Ծ (50) ամաց, յետ ԺԶ (16) ամի թագաւորութեան իւրոյ,
և թագաւորեցին որդիք նորա՝ Ոնորիոս[24] ի Հոմ ամս ԻԹ (29)
և Արկադէոս[25] ի Կոստանդինուպոլիս ամս ԺԳ (13)։
Ի նոյն թվոջ ԳՃԸ (408) յետ մահուանն Արկադէոսի թա-
գաւորէ որդի նորին Փոքր Թէոդոս[26] Ը (8) ամաց։
30 Ի նոյն թվոջ ԳՃԻԳ (423) վաղճանեալ Ոնորիոս ի Հոմ և
թագաւորէ Վաղենտիանոս Երրորդ[27] ամս ԼԱ (31)։
Ի նոյն թվոջ ԳՃԽԹ (449), յետ ԽԲ (42) ամի թագաւորու-
թեան իւրոյ, սուրբ Թէոդոս Փոքր վաղճանի և թագաւորէ Մար-
կիանոս[28] հազարապետ ընդ Պողքերի՝ քեռ Թէոդոսի։ Վերջ բանիս։

ԹԵՆՈԹԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Եթե նկատի ունենանք ժամանակագրության հեղինակի հետևողականությունը, ապա այս վկայությունն անհրաժեշտ է ուղղել «ԺԷ (17)», որովհետև Տրդատ Գ-ի գահակալությունն ընդունելով 286 թ., սրան 17 և ոչ թե 15, պետք է ավելացնենք, որպեսզի ստանանք 303 թիվը, ինչպես բնագրում է։ Բնագրի այս սխալն արդյունք է հայերեն «ԺԷ» և «ԺԵ» տառերի շփոթման։ Այս հանգամանքը մեզ ենթադրել է տալիս, որ սույն ժամանակագրությունը մի այլ տեղից է ընդօրինակվել № 3079 ձեռագրում։

2. Բնագրում «Բագաւորութեան»։

3. Իմա խոսրով կոտակ։

4. Այս վկայությունը շատ հետաքրքիր է և ուշագրավ։ Սկզբնաղբյուրները՝ Փ. Բուզանդ, Մ. Խորենացի, սրանց հետևելով և մեր մյուս պատմիչները Արշակ Բ-ի թագավորությունը նշում են 30 տարի։ Վերջին մի քանի տասնամյակների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արշակ Բ թագավոր եղած պետք է լինի 17—18 տարի։ Մարկվարտը սրա իշխանության վերջին սահմանը նշում է 367 /368 թ. թ., („Untersuchungen zur Gechichte von Eran" Heft I, Göttingen. 1806, էջ 220—221, ծանոթ. 28), իսկ սկիզբը՝ 350 /351 թ. թ., թեև ավելի ուշ նա անարդարացի կերպով վերջին տարեթիվը ուղղում է 353 թ. („Sudarmenien und die Tigrisquellen" Wien. 1930, էջ 60*).

5. Կոստանդին I, իշխել է 306—337 թթ.։

6. Ֆլավիոս Սևերոս, իշխել է 305—307 թթ.։

7. Մաքսենտիոս, իշխել է 307—312 թթ.։

8. Մաքսիմինոս Դայա, իշխել է 305—313 թթ.։

9. Խոսքը վերաբերում է Կոստանդին I-ի և Մաքսենտիոսի միջև Հռոմի պարիսպների տակ, Մուլվիոսյան կամուրջի մոտ, 312 թվին տեղի ունեցած ճակատամարտին, որտեղ Կոսաանդին I-ը հաղթեց։ Հաղթանակի շուրջը հետագայում քրիստոնյաները ստեղծեցին առասպել, ըստ որի նախքան ճակատամարտը Կոսաանդին I-ին իբր երևացել է մի խաչ, վրան հունարեն գրված „ἐν τούτῳ νίκα" («այսու յաղթեսցես») խոսքերը։ Բնագրում խոսքն այդ մասին է։

10. Հեղինակը նկատի ունի Կոստանդին I-ի և Լիկինիոսի հրատարակած Միլանի էդիկտը։

11. Լիկինիոսի թագավորությունը Կոսաանդին I-ի հետ սովորաբար նշում են 10 տարի։

12. Միանգամայն ստույգ է Լիկինիոսի ապստամբության տարեթիվը։ Վերջինս աքսորվեց Թեսալոնիկ, որտեղ և սպանվեց։

13. Կոստանտ, իշխել է 337—350 թթ.։

14. Կոսաանդին II, իշխել է 337—340 թթ.։

15. Կոստանտիոս II, իշխել է 337—361 թթ.։

16. Մագնենտիոս. իշխանության համար պայքարեց Կոստանտի դեմ, սպանեց նրան և գրավեց իշխանությունը 350 թ., այնուհետև պայքարեց Կոստանտիոս II-ի դեմ և սպանվեց 353 թվին։

17. Հուլիանոս, իշխել է 361—363 թթ.։

18. Հովիանոսի իշխանությունը նշվում է 363—364 թթ.։

19. Վալենտինիանոս I, իշխել է 364—375 թթ.։

20. Վալենս, իշխել է 364—378 թթ.։

21. Սա թագավորել է 367—383 թթ.։

22. Վալենտինիանոս II, կրտսեր, իշխել է 375—392 թթ.։

23. Թեոդոս I, իշխել է 379—395 թթ.։

24. Հոնորիոս, իշխել է 395—423 թթ.։

25. Արկադիոս, իշխել է 395—408 թթ.։

26. Թեոդոս II, իշխել է 408—450 թթ.։

27. Պատմագրության մեջ ընդունված է Հոնորիոսի անմիջական հաջորդ Նշեհոհանին (իշխել է 423—425 թթ.), ապա նոր Վալենտինիանոս III-ին, իշխել է 425—455 թ. թ.։

28. Մարկիանոս, իշխել է 450—457 թթ.։